

<https://doi.org/10.46991/hc.2022.17.1.232>

Մաթենիկ Չուգասզյան

արվ. գիտ. թեկն., ԵՊՀ հայ արվեստի
պատմության և տեսության ամբիոնի դոցենտ

ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԱՏԱՆ ԱՐԾԱԹԵ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ¹

Հիմնաբառեր. Էջմիածնի գանձերը,
Էջմիածնի զարդերը, արծաթե զարդեր, արծաթե
գոտիներ, արծաթագործներ,
արծաթագործության դպրոցներ

*XIX-XX դարերում հայկական ժողովրդական տարազային համալիրների անբաժան
բաղադրիչն է եղել գոտին: Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր կենտրոններում
ստեղծված արծաթե գոտիները տարբերվում են միմյանցից ճարմանդի ձևով, հարդարանքով
և հաճախ նաև մշակման տեխնիկայով:*

*Արծաթագործության նմուշների հարստության տեսանկյունից բացառիկ է
Էջմիածնի գանձատան արծաթե բազմաբնույթ հավաքածուն: Այս հոդվածի նպատակն է
հետազոտել Գանձատան գոտիները, որոնց վերաբերյալ առանձին ուսումնասիրություն
նախկինում չի կատարվել:*

*Գանձատան կանացի գոտիների շարքում է թիթեռնիկաձև ժապավենակապ
ճարմանդով նմուշը (199), որը կառուցվածքով կրկնում է Վասպուրականի զարդերի տեսքը,
իսկ պատկերների և տուղրայի առկայությամբ՝ Կարսում ստեղծված գոտիներից մեկը:*

*Գանձատան տղամարդկանց գոտիներից հետաքրքիր է կինտոյի կերպարով
հարդարված նմուշը (258), որի վրա պահպանվել է վարպետի ազգանունը՝ «М
АИРАПЕТОВЪ»: Մեր հետազոտության ընթացքում Հայաստանի տարբեր
հավաքածուներում գտանք նույն արծաթագործի ստեղծած ևս հինգ գոտի: Փաստորեն՝ սա
նույն վարպետի ստեղծած, առայժմ մեզ հայտնի, ամենամեծ ու բազմազան տեսակների
գոտիներից բաղկացած հավաքածուն է: Մեր կարծիքով այս արծաթագործը 1893-1914 թթ.
ընթացքում Թիֆլիսի հայկական շուկայում աշխատած Մկրտիչ Նիկողոսի Այրապետովն է:*

*Գանձատան տղամարդկանց գոտիներից մեկը զարդարված է թագի պատկերով և
հետազոտության ընթացքում նման զարդով մի քանի այլ գոտիներ գտանք: Հավանաբար
նման «Թագակիր գոտիները» ստեղծվել են բարձրաստիճան անձանց համար հատուկ
պատվերով:*

*Գանձատան հավաքածուի գոտիներից յուրաքանչյուրը որևէ յուրահատկությամբ
տարբերվում է այլ թանգարաններում պահվող նմուշներից, ինչը վկայում է մեր
արծաթագործների հմտության ու վարպետության մասին:*

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6E266 ծածկագրով «Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնի թանգարաններում պահվող ոսկերչական և արծաթագործական ստեղծագործությունների ուսումնասիրությունը» գիտական
թեմայի շրջանակում:

Satenik Chookaszian

PhD, Lecturer of the Chair of History and
Theory of Armenian Art of Yerevan State University

**SILVER BELT COLLECTION FROM THE TREASURY MUSEUM OF MOTHER SEE OF HOLY
ETCHMIADZIN.**

Keywords: Treasures of Etchmiadzin, Jewelry of Etchmiadzin, silver jewelry, silver belts, silversmiths, silversmith schools, history of silversmithing

In the XIX-XX centuries, belt was an important part of the Armenian folk costume. Silver belts were created in different areas of Western and Eastern Armenia. They varied from one another by the form of clasps, decoration, and often in creation techniques.

The silver collection of the Treasury of Mother See of Holy Etchmiadzin is unique in terms of its richness and variety. The purpose of this article is to study the silver belts of the Treasury that have not been examined before.

Among the women's belts of the Treasury, there is one with a butterfly-ribbon clasp (199), which repeats the structure of Vaspurakan belts, but the decoration of it seems to be pretty similar to another one that was created in Kars.

From the men's belts collection, it is worth mentioning the one decorated with the image of a kinto (258) that has the surname of the master preserved - "М АИРАПЕТОВЪ". During our research, we had found five belts created by the same silversmith in different museums in Armenia. In fact, so far this is the largest collection known to us being created by the same master and consisting of diverse types of belts. In our opinion, this silversmith is Mkrtich Nikoghos Ayrapetov, who worked in the Armenian market of Tbilisi (Georgia) during 1893-1914.

One of the men's belts in the Treasury is decorated with a depiction of a crown. During the research, we found several other belts with such decoration. Probably such "Crown Belts" were created for high-ranking people by special order.

Each of the belts of the Treasury collection has unique difference/s from similar ones kept in other museums, which testifies to the skill and mastery of our silversmiths.

Сатеник Чугасзиан

кандидат искусствоведения, доцент кафедры
истории и теории армянского искусства ЕГУ

**КОЛЛЕКЦИЯ СЕРЕБРЯНЫХ ПОЯСОВ ИЗ МУЗЕЯ СОКРОВИЩНИЦЫ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО
СВЯТОГО ЭЧМИАДЗИНА**

Ключевые слова: Сокровища Эчмиадзина, украшения Эчмиадзина, серебряные украшения, серебряные пояса, серебряных дел мастера, школы серебряных дел мастеров, история серебряного дела

Пояс был неотъемлемым элементом армянского народного костюма XIX-XX веков. Серебряные пояса, созданные в разных центрах Западной и Восточной Армении, отличаются друг от друга формой застежки, орнаментом, а часто и техникой обработки.

Многогранная коллекция серебра Эчмиадзинской сокровищницы уникальна по богатству изделий из серебра. Целью данной статьи является исследование серебряных поясов Сокровищницы, которые ранее отдельно не изучались.

Среди женских поясов сокровищницы есть пояс с застежкой-бабочкой (199), повторяющий структуру Васпураканских украшений, а изображением один из поясов созданных в Карсе.

Из мужских поясов интересен пояс украшенный изображением кинто (258), на котором сохранилась фамилия мастера – «М АИРАПЕТОБЪ». В ходе нашего исследования мы обнаружили в разных коллекциях Армении пять поясов, созданных одним и тем же мастером. По сути, это, известная нам до сих пор,

самая большая коллекция созданная одним мастером и состоящая из самых разнообразных видов поясов. По нашему мнению, это ювелир Мкртич Никогос Айрапетов, работавший на армянском рынке вТбилиси (Грузия) в 1893-1914годы.

Один из мужских поясов в сокровищнице украшен гравировкой короны. В ходе исследований мы обнаружили еще несколько поясов с таким декором. Вероятно, такие «Коронные пояса» создавались для высокопоставленных лиц по специальному заказу.

Каждый из поясов сокровищницы уникален и отличается от экспонатов, хранящихся в других музеях, что свидетельствует о художественных навыках и об умении наших мастеров.

* * *

Ներածություն: XIX-XX դարերում Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր կենտրոններում ստեղծվել են արծաթագործության յուրօրինակ նմուշներ: Յեղասպանությունից հետո փրկված զարդերի մի մասը հանգրվանել է հայաստանյան և համաշխարհային թանգարաններում կամ հայտնվել է մասնավոր հավաքածուներում: Ցավոք, այդ գանձերը մինչ օրս կարոտ են ուսումնասիրության: Մենք չունենք թանգարաններում պահվող նմուշների, ընդհանրապես հայ արծաթագործության պատմության, դպրոցների ու զարդերի ոճական առանձնահատկությունների վերաբերյալ ամբողջական հետազոտություն:

Առանձին դպրոցի ուսումնասիրման եզակի նմուշ է Յովսեփ Թօքաթի «Հայ արծաթագործ վարպետներ» կոթողային աշխատությունը: Թանգարանի զարդերի հավաքածուն ներկայացնող հրաշալի օրինակ է Երևան քաղաքի պատմության թանգարանի տպագրած փոքրիկ, բայց կարևոր ալբոմը: Կարևոր աղբյուրներից է «Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն» գիրքը, որը ներկայացնում է նրա անձնական հավաքածուն: Հիշարժան են Հ. Տեր-Ղևոնդյանի, Ն. Ավագյանի, Հ.

Մարգարյանի, Լ. Չուգասյանի, Մ. Վարդանյանի և այլ հետազոտողների տարբեր տարիների ընթացքում գրած կարևոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու հայ արծաթագործության պատմության մասին: Ուշագրավ է նաև Մանյա Ղազարյանի Արցախի արվեստի գանձերին նվիրված աշխատության մեջ արծաթե զարդերի վերաբերյալ բաժինը, ինչպես նաև Աշխունջ Պողոսյանի ու Մելանյա Բալայանի տպագրած «Արցախի պատմաերկրագիտական թանգարանի արծաթյա զարդերի հավաքածուի» կատալոգը: Իսկ Ա. Իսրայելյանի «Հայուհիների զարդերը XVIII-XX դդ. (ըստ Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուի)» կատալոգը, որը գալիս է լրացնելու կանացի զարդերի մասին շատ կարևոր տեղեկությունները: Այդուհանդերձ, այս բոլոր հետազոտություններում հպանցիկ կամ ընդհանրական է անդրադարձը արծաթե գոտիներին:

Արծաթագործության նմուշների հարստության տեսանկյունից բացառիկ է Էջմիածնի գանձատան արծաթե հավաքածուն: Այն բազմաբնույթ է և ընդգրկում է ինչպես ծիսական (խաչեր, մասնատուփեր, աջեր և այլն), այնպես էլ աշխարհիկ իրեր: Էջմիածնի գանձատան հավաքածուի արծաթի հավաքածուն նախկինում ուսումնասիրել է արվեստաբան Մանյա Ղազարյանը, որը ներկայացրել է ծիսական նմուշներից մի քանիսը (Ղազարյան, 1987 էջեր 92-101): Փաստորեն՝ Գանձատան գոտիների վերաբերյալ առանձին ուսումնասիրություն նախկինում չի կատարվել: Այդպիսով՝ տվյալ ուսումնասիրությունը արդիական է ու նպատակ ունի լրացնելու արծաթագործության պատմության մասին հայտնի տվյալները:

Այս հոդվածում առանձրացրել ենք գոտիների տեսակները, առավել մանրակրկիտ ներկայացրել ենք վերջիններիս կառուցվածքն ու հարդարանքը, փորձել ենք հստակեցնել դրանց ստեղծման ժամանակաշրջանը, կենտրոններն ու վարպետներին: Կամարների (գոտին գրականության մեջ անվանել են նաև կամար, որը ծագել է պահլավերեն *kanar*, պարսկերեն՝ *kamar* բառերից) (Ավագյան, 1987 էջեր 108-120, էջ 108) ստեղծման վերաբերյալ տվյալների սակավությունը կամ բացակայությունը լրացրել ենք այլ թանգարաններում պահվող օրինակների ոճական ու տեխնիկական համեմատությունների, ինչպես նաև պատմական լուսանկարների ուսումնասիրության միջոցով:

Գոտիների կիրառությունն ու տեսակները: XIX-XX դարերում գոտին հայկական ժողովրդական տարազային համալիրների անբաժան բաղադրիչն է եղել (Պատրիկ, 1967 էջեր 32-40, տախտակ 36-40, 45-56): Դրանք կատարել են նաև ընտանեկան կարգավիճակի ցուցիչի, ինչպես նաև հմայիլի դեր: Գոտիներին վերագրել են ոչ միայն չարքերից պաշտպանելու, այլև զավակ տալու գործություն՝ պտղաբերության խորհուրդ: Գոտիները պատրաստվել են տարբեր նյութերից, գերակշռող մասը՝ ազնիվ մետաղներից, թեև լայն տարածում են ունեցել նաև կտորից կարված, կաշվե, բամբակից, բրդից կամ մետաքսից հյուսված գոտիները:

Հայաստանի տարբեր տարածաշրջանների կամ պատմաազգագրական շրջանների գոտիներն առանձնանում են իրենց բնորոշ տեխնիկայով, ճարմանդի ձևով ու զարդանախշերով: Հայկական արծաթագործության կարևոր կենտրոններից են եղել Վանը (Թօթաթ, 2005 էջեր 62-63, 103-116), Կարինը, Սեբաստիան (Տեր-Ղևոնդյան, 1965 էջեր 66-67, 69-70), Ախալցխան, Ալեքսանդրապոլը (Մարգարյան, 1988 էջեր 55-61, էջ 56, 58), Սյունիքը,

Շուշին (Պողոսյան Աշխունջ, Բալայան Մելանյա, 2020) և այլն: Այս և մյուս կենտրոններում գոտիները պատրաստվել են ձուլման, փորագրման, զուգաթելի, սևադապատման (Տեր-Ղևոնդյան, 1986 էջեր 239-255, էջ 242), արծնապատման տեխնիկաներով:

Գոտիների ճարմանդները շատ տարատեսակ են և ըստ ձևերի բաժանվում են հիմնականում օձագլուխ, գորտաձև, թիթեռնիկաձև, նշաձև, աղավնաձև, շրջանաձև, գմբեթաձև ու քառանկյունաձև երկայնակի հատած, գլանի ձև ունեցող խմբերի: Ճարմանդի կառուցվածքից պարզ է, թե որ սեռի համար է նախատեսված եղել, օրինակ՝ գմբեթաձև ու քառանկյունաձև երկայնակի հատած, գլանի ձև ունեցող (անվանում են նաև թամբաձև) ճարմանդներով գոտիներ կրել են տղամարդիկ, իսկ թիթեռնիկաձև, շրջանաձև, նշաձև, աղավնաձև, օձագլուխ, գորտաձև (Չուգասյան, 2010 էջ 83) ճարմանդներով գոտիներ՝ կանայք (Ավագյան, 1987 էջ 116): Հավանաբար, Ցեղասպանությունից հետո ամուսինների գոտիները կրել են նրանց կանայք կամ դուստրերը՝ համադրելով նաև XX դարի հանդերձանքի հետ: Հետագայում արդեն վաճառքում հայտնված տղամարդկանց գոտիների պարագայում է նույնը տեղի ունեցել և շարունակվում է մինչ օրս:

Ստորև կանդրադառնանք Գանձատան հավաքածուի գոտիներից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Կանացի գոտիները: XIX դարում և XX դարասկզբին հիմնականում Կարինում ու Վանում հաճախ արծաթյա գոտիների նուրբ հատվածները ոսկեգծում էին: Արծաթյա գոտիների մի խումբ զարդարվում էր նաև սևադի տեխնիկայով արված փորագրություններով, որոնց մի մասը բուսական ու ծաղկային հարդարանք ունեւ, իսկ մյուսը ներկայացնում էր Վասպուրականի հուշարձանների պատկերները՝ իրենց մակագրություններով: Նմանատիպ օրինակ է պահվում Գանձատան հավաքածուում՝ համար 199 (Նկ. 1): Այն բաղկացած է զուգաթելով արված թիթեռնիկաձև ժապավենակապ ճարմանդից, որն էլ իր հերթին հարդարված է գնդերով ու վարդյակներով: Գոտու եզրերը հատիկազարդ ոսկեջրած են, իսկ վերադիր ձվաձև մեղալիոնները՝ սևադապատ: Վերջիններիս հարդարանքը տարբերվում է վերոնշյալ եկեղեցիների պատկերներով զարդերից: Այստեղ ներկայացված են տարբեր կառույցների, ինչպես նաև կենտրոնական ծաղկի շուրջ տարածվող բույսերի յուրօրինակ հորինվածքով մեղալիոններ: Նման հարդարանքով գոտիներ են պահվում Պատմության թանգարանում (8640, 8731): Ուշագրավ է, որ Պատմության թանգարանի 8731 և Գանձարանի գոտու մեղալիոններից մեկի վրա նաև տուղրայի պատկեր կա: Տուղրան սուլթանի, խալիֆի կամ խանի անձնական նշանն էր, ինքնագիրը՝ պարունակող տիրոջ անունն ու կոչումը: Այն առավել տարածված էր Օսմանյան կայսրությունում: Այս գոտիների պատկերներն ու տուղրայի առկայությունը հիշեցնում են Կարսի թանգարանում մեր ուսումնասիրած յուրօրինակ գոտին (Նկ. 2): Վերջինս ավելի մեծ օվալաձև ճարմանդով է և ուղղանկյուն լայն զարդատախտակներով: Հավանաբար նման գոտիներ տարածված են եղել նաև Կարսում: Փաստորեն՝ Գանձատան գոտին կառուցվածքով կրկնում է Վասպուրականում ստեղծված գոտիների տեսքը, իսկ պատկերների և տուղրայի առկայությամբ՝ Կարսում ստեղծված նմուշը:

Մեր ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ գորտաձև ճարմանդով կանացի գոտիները լայն տարածում են ունեցել տարբեր շրջաններում: Վերջիններիս

գարդերը խորհրդանշել են պտղաբերության գաղափարը, գորտի ձևը շեշտել է բեղմնավորման ու բազմացման խորհուրդը (Պողոսյան, 2010 էջեր 103-107, էջ 107):

Եռամաս գորտաձև ճարմանդով ոսկեզօծ գոտիների շարքին է պատկանում Գանձատան 257 համարի գոտին (Նկ. 3): Ի տարբերություն մյուս գորտաձև գարդերի՝ այս նմուշի ճարմանդի կենտրոնական հատվածը սրածայր է: Գոտին զարդարված է մանրարուրքով, ոլորազարդ հատիկազարդի խիտ ու նուրբ հարդարանքով: Վերջինիս ձևավորումը հարստացնում են համաչափորեն տեղավորված մեծ ու փոքր ուռուցիկ վարդյակները, որոնց մեջ ագուցված են գունավոր ապակեքարեր: Յուրօրինակ է ճարմանդի կենտրոնական հատվածի մեջտեղում հայտնված խաչաձև տեղավորված սրածայր բացվածքը, որի ներսում մեծ ուռուցիկ վարդյակ է՝ կարմիր ապակեքարով: Ճարմանդի սրածայր կառուցվածքով ու կենտրոնական բացվածքի ձևով այս գոտին ընդհանրություններ ունի Հայաստանի ազգագրության ու ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանի (այսուհետ՝ ՀԱԱՊՊԹ) 652 համարի գարդի հետ:

Գանձատան գոտու ճարմանդին շղթայով ամրացված է ծակոտկեն գլխիկով փականը: Այս գոտու կառուցվածքը հիշեցնում է գրող Րաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյանի) կնոջ՝ Աննայի հայտնի լուսանկարներից մեկը (ՀՊԹ) (Նկ. 4): Լուսանկարում նա կրում է Սալմաստ-Ուրմիայի տարագ: Նման պատմական լուսանկարների շնորհիվ հնարավոր է դառնում առավել ճիշտ տարանջատել տվյալ տեսակի գոտու տարածաշրջանը:

Գորտաձև ճարմանդով գոտիների շարքին է դասվում նաև Գանձատան 261 համարի գոտին (Նկ. 5): Վերջինս կազմված է եռամաս ճարմանդից և ուղղանկյունաձև հորիզոնական զարդատախտակներից, որոնք հարդարված են հատիկազարդով արված ցանցկեն բուսական հորինվածքով, երկուական ակնաբներով և ուռուցիկ վարդյակներով: Ոսկեջրած այս գոտու ողջ մակերեսը, ներառյալ վարդյակները, զարդարված են մանրարուրքով: Վերջիններիս հարդարանքում հանդիպում են հորիզոնական տեղավորված հատիկազարդ նախշեր: Ինչպես ճարմանդի, այնպես էլ զարդատախտակների վրա առկա մեկական մեծ կենտրոնական վարդյակի և երկու կողային ակնաբների նեսում ագուցված են փիրուզե քարեր: Դրանց վերագրում էին գերբնական հատկանիշներ՝ հավատալով, որ քարերի շնորհիվ կրողները պաշտպանվում էին հիվանդություններից, չար աչքից և այլն:

Գանձատան այս գոտին տարբերվում է նմանօրինակ գորտաձև ճարմանդով խմբի մյուս օրինակներից զարդատախտակների ստորին հատվածում առկա ալիքաձև հատիկազարդ ժանյակի առկայությամբ: Այս յուրօրինակ հավելումը նրբություն է հաղորդում գոտուն: Վերջինիս հարգանշման ձևից պարզ է դառնում, որ այն ստեղծվել է 1908-1917 թթ. ընթացքում:

Գանձատան 259 համարի գոտին այս հավաքածուում գորտաձև ճարմանդով գոտիների շարքում վերջինն է (Նկ. 6): Այն կազմված է եռամաս գորտաձև ճարմանդից և ուղղանկյունաձև հորիզոնական զարդատախտակներից (Նկ. 7): Ոսկեջրած այս գոտին հարդարված է մեկական մեծ կենտրոնական ու վեցական փոքր ակնաբներով, որոնց ներսում տարբեր գույների քարեր են ագուցված: Նմանօրինակ գոտիներ են պահվում ՀԱԱՊՊԹ (Թ-407, 803, 804), ՀՊԹ (Ա 10833, Ա 10835) և Ժողովրդական արվեստների թանգարանում (այսուհետ՝ Ժող. արվ. թանգարան) (Մ-969): Վերջինիս հարգանշումը

վկայում է Բաքվում ստեղծված լինելու մասին: Չի բացառվում, որ Գանձատան 259 համարի և վերոնշյալ մյուս գոտիներն էլ Բաքվի հայ արծաթագործների ստեղծած զարդերը լինեն: Ուշագրավ է, որ գորտաձև ճարմանդով, ոսկեջրած, ավելի նուրբ հյուսկեն զարդանախշով և ագուցված քարերով (հիմնականում՝ փիրուզագույն ապակեքար) գոտիների մեկ այլ տեսակ տարածված էր Ախալցխայում:

Գանձատան 352 համարի թռչնագոտին (Նկ. 8) հարդարված է սևադե ծաղկային հարդարանքով: Ճարմանդի կենտրոնական մասը երկգլխանի արծվի տեսքով է, իսկ կողային զարդատախտակների վերին հատվածում կիսադեմով ներկայացված արծիվների մեկական գլուխներ ու թևեր են: Վերջիններս հարդարված են սևադե արված թեփուկավոր զարդով: Կողային տախտակների կենտրոնում մեկական ուռուցիկ վարդյակներ են, հավանաբար ավելի մեծ կենտրոնականը վնասվելու պատճառով բացակայում է: Բացակայում են նաև կաշվի վրա ամրացված զարդակոճակները: Լուսիկ Ագուլեցու հավաքածուում կա նման ճարմանդով թռչնագոտի, ինչպես նաև մեկ այլ գոտի, որի վրա երեք վարդյակների փոխարեն երեք աստղեր են («Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն», 2010 էջեր 94, Նկ. 1, 2): Կաշվի վրա ամրացված զարդակոճակներով ու սևադե հարդարված ճարմանդներով նմանատիպ գոտիները լայն տարածում ունեին Սյունիքում ու Արցախում:

Տղամարդկանց գոտին: XIX դարում և XX դարասկզբին տղամարդիկ իրենց կտորի գոտիներից հաճախ կախում էին ծխախոտի տոպրակը, գոտու մեջ տեղավորում էին ծխամորձը, իսկ կաշվե գոտու կողքից կախում էին դաշույնը: Այլ էր ազնիվ մետաղներով գոտիների դերը. ոսկե տարբերակը դիտվում էր իբրև ունևորության, իսկ արծաթյա գոտին՝ տղամարդկության խորհրդանիշ (Պողոսյան, 2010 էջ 129):

Գանձատան 258 համարի գոտին կազմված է գմբեթաձև ելուստով ճարմանդից և նեղ ու լայն բուսական զարդանախշով հարդարված զարդատախտակներից (Նկ. 9): Նեղ տախտակները երկու կողմից կիսաշրջանաձև փորվածքներ ունեն, որոնց մեջ ներդաշնակորեն տեղավորված են լայների ուռուցիկ հատվածները: Նեղ զարդատախտակների կենտրոնում փոքրիկ, իսկ լայների վրա մեծ գնդեր են: Մեծ գմբեթաձև ճարմանդը բազմաստիճան է, ծայրին՝ ուռուցիկ ելուստով: Ճարմանդի լայն հատվածից դեպի ելուստը փոքրացող գոտիների վրա տարբեր նախշեր են՝ բույսերի փորագրությամբ, հատիկազարդ և այլն: Գոտու եզրը հատիկազարդ ժանյականաձև է, բայց ոչ թե դեպի ներս ուղղված պարույրների ձևով, այլ ելուստավոր:

Ճարմանդի փակվող զարդատախտակի հատվածում ներկայացված է կինտոյի կերպարը հիշեցնող տղամարդու դիմանկար (Նկ. 10): Մեր ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ ճարմանդի զարդատախտակի վրա տղամարդկանց պատկերներով գոտիները հիմնականում ստեղծվել են Թիֆլիսում ու Շիրակում:

Գանձատան գոտու վրա դիմահայաց ներկայացված կերպարը երկարաճիտ կոշիկներով է, ոտքերը՝ դեպի ձախ թեքված: Նրա մի ձեռքը ազդրին է հենված, իսկ մյուսը վեր է բարձրացված՝ պահելով եղջերազավաթ հիշեցնող բաժակը: Տղամարդու կողքին պատկերված երկար ոտքով կլոր սեղանի վրա գինու շիշ ու բաժակ է ցուցադրված: Գոտու վրա պահպանվել է արծաթագործի ազգանունը՝ «М АИРАПЕТОВЪ» և 1899-1908 թթ. ընթացքում կիրառված ռուսական հարգանշումը (Актацатурян, 1982 էջ 32):

Նույն վարպետի գմբեթաձև ճարմանդով գոտի է պահվում Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում (Սր. 130) (Նկ.11): Լուսիկ Ագուլեցու թանգարանի գոտիների հավաքածուն ուսումնասիրելիս գտանք նույն անվանատառերով, բայց թամբաձև ճարմանդով գոտի: Հատած գլանաձև ճարմանդով է նույն վարպետի ստեղծած Երևան քաղաքի պատմության թանգարանում (այսուհետ՝ ԵՊԹ) պահվող ՄՄ 2173 (Զարդերի հավաքածու, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2008 էջ 26) ոսկեջրած շքեղ օրինակը: Այրապետովի ստեղծած գույգ արծիվներով յուրօրինակ գոտի գտանք նաև Ժող. արվ. թանգարանում (2393 Մ 722) (Նկ. 12): Այս վարպետի ստեղծած գորտաձև ճարմանդով գոտի էլ կա Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում (3529) (Նկ. 12): Վերջինիս ճարմանդի կենտրոնում շքեղ ոճավորված զարդի մեջ կնոջ դեմք է ներկայացված:

Մանյա Ղազարյանը իր հետազոտության մեջ հիշատակում է վանեցի Հայրապետյանին, որը հետազայում տեղափոխվել էր Թիֆլիս և դարձել անվանի ոսկերիչ Մ. Այրապետով: Հայտնի է Միքայել Այրապետովը, որը Պարսկաստանի հպատակ է եղել ու աշխատել է երեք այլ վարպետների հետ, ինչպես նաև Թիֆլիսի հայկական շուկայում հայտնի Մկրտիչ Նիկողոսի Այրապետովը (Аствацатурян, 1978 էջ 63): Կարծում ենք, որ վերջինս է եղել վերոնշյալ զարդերի հմուտ հեղինակը: Արծաթագործը Թիֆլիսի հայկական շուկայում աշխատել է եղբոր՝ Ավետիսի հետ 1893-1914 թթ. ընթացքում: Այսպիսով՝ վերոնշյալ տվյալների արդյունքում ենթադրում ենք, որ վանեցի Մկրտիչ Նիկողոսի Այրապետովը ստեղծել է միմյանցից շատ տարբեր, յուրօրինակ այս 6 գոտիները Թիֆլիսում 9 տարիների՝ 1899-1908 թթ. ընթացքում:

Գանձատան 260 համարի գոտին (Նկ. 13) կազմված է հատած թամբաձև կամ կիսագլանաձև ճարմանդից և կաշվի վրա հավաքված ուղղանկյուն զարդատախտակներից: Վերջիններս հարդարված են վերևից ու ներքևից իրար հաջորդող տարբեր չափերի հատիկազարդերի, ալիքաձև նախշերի շարաններով, իսկ նեղ հորինվածքի բուսական փորագրության կենտրոնում ուռուցիկ վարդյակ է: Զարդատախտակների միացման հատվածում էլ՝ սրածայր, երկարավուն կառուցվածքով ուռուցիկ մեկ այլ զարդ է: Ճարմանդի վրա սևադրվ արված ծաղկի շուրջ բույսերի տեսքով փորագրություններ են: Նման հարդարանքով գոտի է պահվում ՀԱԱՊՊԹ 409/9:

Ուշագրավ է Գանձատան գոտու ճարմանդի փակվող զարդատախտակի հատվածում ժպտացող տղամարդու պատկերը (Նկ. 14): Դիմահայաց պատկերված երկար մարմնով և կարճ ոտքերով կերպարի պարաններ հիշեցնող ձեռքերը կոնքերին են մոտեցրած, իսկ երկարաճիտ կոշիկներով ոտքերը՝ տարբեր ուղղություններով ներկայացված:

Ստորին հատվածում տախտակները հարդարված են ժանյակազարդ եզրով: Այս զարդաշարը, ըստ ազգագրագետ Նազիկ Ավագյանի, բնորոշ էր գերազանցապես Շիրակի, Լոռու շրջաններին: Մեր ուսումնասիրության արդյունքում նման ժանյակ հանդիպեցինք ոչ միայն վերոնշյալ, այլ նաև Բայազետի ու Գեղարքունիքի տարածաշրջաններում ստեղծված գոտիների հարդարանքում: Վարպետների տեղափոխման կամ գուցե ամուսնությունների դեպքում այդ հարդարանքը տարածվել է նաև մյուս շրջաններում: Գանձատան նմուշի ժանյակը տարբերվում է վերոնշյալ տարածաշրջաններում ստեղծված գոտիների

հարդարանքում տարածված, դեպի ներս ուղղված պարույրներից: Գանձատան գոտու ժանյակը օվալաձև է՝ հատիկազարդով հարդարված:

Գոտու ներսի հատվածում առկա են վարպետի անվանատառերը՝ ռուսերենով «М. III.», և հարգանշումը: Վերջինիս ձևից պարզ է դառնում, որ այն ստեղծվել է 1908-1917 թթ. ընթացքում: Նույն անվանատառերով, թամբաձև ճարմանդով ու ուղղանկյուն զարդատախտակներով գոտի է պահվում Լուսիկ Ագուլեցու հավաքածոում («Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն», 2010 էջեր 105, Նկ. 3): Երկուսի ճարմանդին էլ օղակներից բաղկացած շղթա է ամրացված:

Նույն հավաքածոում գտանք այս անվանատառերով, շատ յուրօրինակ սրտաձև ճարմանդով գոտու զարդատախտակներ (Նկ. 15): Ալիքաձև փորագրությամբ հարդարված, դեպի վեր թեքված զարդատախտակների միջև սրտաձև կառուցվածքով ճարմանդն է, որը վերևից կանացի կիսադեմի տեսքով շղթայակապ փական ունի: Այս բացառիկ նմուշը ներքևից հարդարված է հատիկազարդ ժանյակով:

Մեր հետազոտության ընթացքում գտանք նույն անվանատառերով և հարգանշմամբ մեկ այլ գոտի՝ Վենետիկի Միխիթարյան միաբանության հավաքածոում (Նկ. 16): Վերջինս հարդարանքով տարբերվում է նախորդներից: Այն կազմված է կաշվի վրա ամրացված յոթ զարդակոճակներից (վարդյակներ, նշաձև զարդեր) և երկու երկարավուն տախտակներից բաղկացած քառակուսի ճարմանդից: Նման զարդատախտակներով գոտի է կա ՀԱԱՊՊԹ 6939 համարի ներքո: Այս նմուշի զարդակոճակները չեն պահպանվել: Չի բացառվում, որ նույն վարպետի աշխատանքն է:

«М. III.» արծաթագործի անվանատառերով գոտիները համապատասխանում են Բաքվում 1910-1913 թթ. աշխատած Միքայել Շաքարովին (Аствацатурян, 1982 էջ 60): Պահպանված տեղեկությունների սակավությունը թույլ չի տալիս պատկերացում կազմել հայ արծաթագործների ստեղծագործական ճանապարհի մասին: Արդյո՞ք նա միայն Բաքվում է աշխատել, թե՞ նաև Թիֆլիսում: Զարդերի ոճական առանձնահատկություններից դատելով՝ չի բացառվում, որ վերոնշյալ չորս գոտիները ստեղծել է Միքայել Շաքարովը տարբեր կենտրոններում:

Գանձատան 262 համարի ոսկեջրած գոտին (Նկ. 17) կազմված է թամբաձև ճարմանդից ու նեղ զարդատախտակներից, որոնցից առաջինի վրա առկա ծաղիկ-վարդյակը տեղավորվում է հաջորդի ակոսավոր փորվածքի մեջ: Ներքևի հատվածում հատիկազարդ ժանյակն է: Ողջ գոտին զարդարված է սևադե մշակմամբ, մանրարուրքով, հատիկազարդով: Այս նմուշը իր կառուցվածքով ու հարդարանքով հիշեցնում է ՀԱԱՊՊԹ 146 համարի գոտին: Հիմնական տարբերությունը ճարմանդի փակվող հատվածի հարդարանքն է: Գանձատան օրինակում այն ամբողջովին զարդարված է ոճավորված բույսերի չորս ուղրապտույտ տերևների միջև առկա ծաղկի պատկերով, իսկ ՀԱԱՊՊԹ գոտու զարդատախտակը երկու հորիզոնական մասերի է բաժանված: Գոտիներից վերևում՝ ծաղկի շուրջ, երկու նուրբ բույսեր են, իսկ ներքևում՝ միմյանցից ցողուններով տարանջատված պատվիրատուի «С.А. անվանատառերը: Երկու գոտիներն էլ բարակ կաշվին ամրացված, գոտուց ցած իջնող արծաթե երկարավուն զարդ ունեն, որը եռամաս ծայրով է ավարտվում: Վերջինիս դարձերեսին վրացերենով գրված է՝ Սաքուլ Պիվագով:

Այս երկու գոտիների հետ ընդհանրություններ ունեն նաև ՀԱԱՊՊԹ հավաքածուի 587, 614/5 համարների զարդերը: Կրկին այդ նմուշների հիմնական տարբերությունը ճարմանդի փակվող զարդատախտակի հարդարանքն է: Շքեղ հարդարանքից ու կառուցվածքից դատելով այս գոտիները ևս Թիֆլիսի հայ արծաթագործների ստեղծագործություններն են:

«Թագակիր գոտիները»: Գանձատան տղամարդկանց գոտիների շարքում առանձնանում է 263 համարի գոտին, որը կազմված է հատած զլանաձև ճարմանդից և ուղղանկյուն զարդատախտակներից (Նկ.18): Վերջիններիս վրա փորագրված կենտրոնական ծաղկից դեպի չորս անկյունները տարածվող բուսական երիզները հարդարված են սևադուր, իսկ հորինվածքի շուրջ առկա ցողունները՝ հատիկազարդերով: Ծաղկից տարածվող հարդարանքը հիշեցնում է հունական արվեստում հայտնվող ոճավորված ծառի պատկերը (Буткевич Л.М., 2008 стр. 72) (Նկ. 19):

Այս գոտու զարդատախտակների միացման հատվածներում ուղղահայաց տեղադրված ուղղանկյուն վերադիր զարդ է սափորի միջից դուրս եկող երեք զանգակաձև ծաղիկներով: Վստահորեն կարելի է ասել, որ նույն վարպետի ստեղծած գոտու զարդատախտակ է պահվում ԵՊԹ հավաքածուի ՄՄ 2413-3 (Զարդերի հավաքածու, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2008 էջ 35): Այս նմուշը կրկնում է նույնությամբ ոչ միայն վերադիր զարդը, այլ նաև զարդատախտակի հարդարանքը: Իսկ Գյումրու ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության թանգարանի ԳԿԹ 84 գոտին կրկնում է զարդատախտակի ու վրադիր զարդը հարդարանքը, բայց Ալեքսանդրապոլում ստեղծված գոտիներին բնորոշ ավելի խոշոր չափերով: Պատմության (11710/1, 11209, ոսկեգոծ՝ Ա 9922), ԵՊԹ հավաքածուի ՄՄ. 2418 (Զարդերի հավաքածու, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2008 էջ 9), ՀԱԱՊՊԹ 781, 785 գոտիների վրա կրկնվում է միայն վրադիր զարդի հորինվածքը, բայց ավելի խոշոր չափերով: Հավանաբար այս զարդերը արդեն այլ վարպետի ստեղծած նմուշներ են:

Ուշագրավ է, որ ճարմանդի երկու կողային զարդատախտակների վրա ձեռքերը դեպի վեր բարձրացրած և գլուխները հետ ձգած հրեշտակներ են փորագրված: Նման պատկերումը բացառիկ է, և այդպիսի հարդարանքով երկրորդ գոտի չհաջողվեց գտնել: Այդուհանդերձ, փորագրված հրեշտակների մեկ այլ տարբերակ գտանք Հայաստանի Պատմության թանգարանի (14228, 8103), Ժող. արվ. թանգարանի (Նկ.20) և «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հավաքածուներում: Հատած զլանաձև ճարմանդներով այս գոտիների զարդատախտակների վրա փորագրված են երկուսական հրեշտակներ թռիչքի պահին: Առաջին երեք գոտիների վրա նրանք ոճավորված բուսական հորինվածի միջև են ներկայացված, իսկ չորրորդի վրա նրանց միջև սափոր է, որի մեջ վերևից հեղուկ է լցվում: Վերջինիս հարդարանքը իր մշակմամբ ավելի մանրամասն է, սևացման միջոցով զարդերի որոշ հատվածներ ավելի ընդգծված են:

Գանձատան 263 համարի գոտին յուրօրինակ է նաև մեկ այլ նախշի շնորհիվ: Ճարմանդի փակվող զարդատախտակի հատվածում հնգամաս թագ է փորագրված, իսկ դրանից ցած՝ ոճավորված ժապավեն (Նկ. 21): Թագի երեք ծայրերը ծաղկաձև եռամաս լուծում ունեն, իսկ դրանց միջև հայտնված երկուսը՝ օվալաձև: Ներքևի օղակաձև հատվածի վրա

ռոմբաձև ու կլոր զարդեր են փորագրված: Այս թագի հարդարանքը կրկնում է եվրոպական մարքիզների թագերը (Մարքիզ (ֆր.՝ marquis, անգլ.՝ marquess, իտալ.՝ marchese, նոր լատ.՝ marchisus կամ marchio, գերմ.՝ Markgraf-ից), արևմտաեվրոպական ազնվական տիտղոս (Mollett John W., 1966 pp. 96, 205, fig. 208, 442): Անգլիայում մարքիզ տիտղոսը տրվում է հերցոգի ավագ որդուն: Մարքիզների թագի եզրը հարդարված էր ելակի չորս տերևներով (երեքն էին տեսանելի) և չորս արծաթյա (կամ մարգարիտների) գնդիկներով (երկուսն էին տեսանելի) (Նկ. 22): Այս թագերի պատկերները հաճախ էին ներկայացվում ազնվականների զինանշանների վրա, և հավանաբար արծաթե գոտու վարպետը տեսել է նման նախօրինակ: Այս վարկածը հաստատում է նաև թագից ցած առկա ոճավորված ժապավենը: Վերջիններս հաճախ էին համադրվում թագերի հետ զինանշանային պատկերներում:

Մեր հետազոտության արդյունքում թագի ու ժապավենի ճիշտ նույն համադրությամբ գոտի գտանք Սանկտ Պետերբուրգի պետական Էրմիտաժի, կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի թանգարանի հավաքածուում V3-9962 (Նկ. 23): Այս երկու գոտիների վերոնշյալ զարդատախտակների համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ Գանձարանի օրինակի վրա թագի ու ժապավենի շուրջ կետագարդերից կազմված շրջանակ է եղել, որը, ինչպես նաև ժապավենի ստորին հատվածը ներկայումս բացակայում է: Ցավոք, իբրև գոտու ստեղծման վայր Էրմիտաժի կայքում նշվում է Հյուսիսային Կովկասը, բայց ոչ միայն վերոնշյալ զարդատախտակի, այլ նաև ողջ գոտու հարդարանքից պարզ է դառնում, որ այն ստեղծվել է հայ վարպետի կողմից ու ոճական ընդհանրություններից ելնելով, կարելի է ենթադրել, որ այս երկու գոտիների հեղինակը նույն արծաթագործն է: Այս երկու ոսկեջրած զարդերն էլ կազմված են թամբաձև ճարմանդներից, ուղղանկյուն զարդատախտակների միացման հատվածում նույն վերադիր զանգակաձև ծաղիկներն են, իսկ գոտու ստորին եզրը հարդարված է նուրբ ժանյակով:

Մեր ուսումնասիրության ընթացքում նույն թագի պատկերով գոտի գտանք ՀԱԱՊՊԹ հավաքածուում 614/6 համարի ներքո: Հարգանշման համաձայն՝ այն ստեղծվել է 1908-1917թթ. ընթացքում: Այս գոտու զարդատախտակի պատկերը կրկնում է նախորդ երկուսին, միայն այստեղ ներքևում ավելանում են երկու բուսական տարրերի միջև զինու սափորի ու բաժակի պատկերը: Ի տարբերություն նախորդ լայն ուղղանկյուն զարդատախտակների՝ այս գոտին կազմված է նեղ, խիտ տեղավորված տախտակներից: Դրանք զարդարված են նուրբ հյուսկեն ցողուններով, հատիկազարդով ու տախտակների միացման հատվածներում՝ ծաղկի տեսք ունեցող փոքրիկ վարդյակներով:

ՀԱԱՊՊԹ արծաթի հավաքածուի համար 560/1 գոտին ևս զարդարված է թագի պատկերով, բայց վերջինիս հարդարանքը տարբերվում է նախորդ երեք նմուշներից: Թամբաձև ճարմանդով այս ոսկեջրած գոտու նեղ զարդատախտակների կողքին՝ ճարմանդի փակվող զարդատախտակի հատվածում՝ կետագարդերից բաղկացած շրջանակի մեջ, ոսկեզոծ ծակոտկեն խորքի վրա ներկայացված է կրկին հնգամաս թագ, բայց ավելի նեղ է օղակի (diadem-ի) հատվածը, իսկ ելուստները ավելի շեշտված են: Այս զարդատախտակի մակերեսի մեծ մասը զբաղեցնում են թագից ցած, միևնույն ժամանակ նրան միացած «Պ Վ» հայերեն անվանատառերը: Ուշագրավ է, որ վերջիններս գրված են միջնադարյան

²<http://collections.hermitage.ru/entity/OBJECT/71455?page=6&query=%D0%BF%D0%BE%D1%8F%D1%81%D0%B0&index=298&fbclid=IwAR3msNFgH6KjyxQux2rHIUP0FgP79jep2YmJG33WxyOnFQ3skrj-iqSxUrg>

նկարագարող մատյաններում հաճախ հանդիպող ոճավորված բուսական զարդագրի տեսքով: Ակնհայտ է, որ այս շքեղ գոտին ստեղծվել է այդ անվանատառերով անհատի համար:

«Թագակիր գոտիների» շարքին կարելի է դասել նաև Լուսիկ Ագուլեցու հավաքածուի մաս կազմող փոքրիկ թամբաձև ճարմանդով արծաթե գոտին (Նկ. 24): Ճարմանդի փակվող զարդատախտակը բաժանված է երեք հորիզոնական հատվածների: Վերևում ավելի փոքր ու նեղ չափերի, բայց կրկին հնգամաս թագն է, դրանից ցած՝ սևադով զարդարված, վեց թերթիկներից բաղկացած ծաղիկ, իսկ ներքևում հավանաբար պատվիրատուի «III.M.» անվանատառերն են: Առաջին ու երկրորդ հատվածները կողքերից ոճավորված բույսերով են հարդարված: Ի տարբերություն նախորդ նմուշների՝ այս գոտին ոսկեջրած չէ, բայց զարդատախտակների հարդարանքը կրկնում է Գանձատան գոտու ձևավորումը, միայն կենտրոնում ուռուցիկ վարդյակ է հայտնվում: Այս հարդարանքն ունի նաև Հայաստանի պատմության թանգարանի 9922 համարի գոտին, միայն այս նմուշի վրա թագի փոխարեն վիշապին նիզակով սպանող թիկնոցով հեծյալի պատկեր է: Սուրբ զինվորների կերպարները հաճախ են ներկայացվել հայկական միջնադարյան քանդակագործության, փայտարվեստի և մասնավորապես մանրանկարչության նմուշներում: Հավանաբար այստեղ Սուրբ Գևորգ զորավարն է ցուցադրված, որը նկարագարող ձեռագրերի բազմաթիվ լուսանցազարդերում պատկերվում է վիշապին նիզակահարելիս: Այդուհանդերձ, գոտու վրա առկա հեծյալը իր սաղավարտի, թիկնոցի ու թևավոր վիշապի տեսքով հիշեցնում է 1800-ական թթ. ստեղծված վրացական քանդակներից մեկը ³ (Նկ. 25): Հավանաբար, այս և վերոնշյալ գոտիները թիֆլիսահայ արծաթագործների կողմից են ստեղծվել, և չի բացառվում, որ նրանք «Թագակիր գոտիների» այլ տարբերակներ էլ արած լինեն: Այս խմբի գոտիներին բնորոշ են շքեղությունն ու զարդերի հարստությունը: Այդուհանդերձ, հարկ է առանձնացնել Գանձատան օրինակը, որի թե՛ զարդատախտակների նուրբ սևադե մշակումները, թե՛ բացառիկ, որևէ այլ նմուշի վրա չկրկնվող հրեշտակների պատկերները յուրօրինակ հմայք են հաղորդում գոտուն:

Եզրակացություն: Այսպիսով, ամփոփելով հոդվածը՝ հարկ է նշել, որ հայերը, ինչպես նաև մյուս ժողովուրդները, զարդեր կիրառել են ոչ միայն պճնվելու և գեղեցկությունն ընդգծելու համար, այլև դրանց վերագրել են խորհրդաբանական հատկանիշներ: Թեև գոտիները, ըստ ճարմանդների և զարդատախտակների ձևերի, հնարավոր է բաժանել խմբերի, այդուհանդերձ դրանք միմյանցից շատ տարբեր են, քանզի վարպետներից՝ յուրաքանչյուրը դրսևորել է իր անհատական գեղագիտական ճաշակն ու հմտությունը՝ ստեղծելով ինքնատիպ նմուշներ: Գանձատան և այլ հավաքածուների համեմատության արդյունքում հնարավոր եղավ առանձնացնել նույն վարպետների ստեղծած գոտիների խմբեր: Վերջիններիս շարքում հարկ է առանձնացնել մեր ուսումնասիրության ընթացքում ամենամեծ ու բազմազան գոտիների հավաքածուն ստեղծած Մկրտիչ Նիկողոսի Այրապետովին, նաև զարդի՝ մարքիզների թագի շնորհիվ տարաջատեցինք «Թագակիր

³ <https://www.reindeerantiques.co.uk/Item/1086-Tea-Caddies--Other-Objects-Georgian-carved-statue-of-St-George-and-the-Dragon/3> (ղիտումը՝ 11.07.2022):

գոտիների» խումբը, որոնցից յուրաքանչյուրը առանձնահատուկ մշակում ունի, և ակներև է, որ ստեղծվել է բարձրաստիճան անձանց համար: Տարբեր կենտրոններում ստեղծված Էջմիածնի Գանձատան գանձերը վկայում են ոսկեձեռք հայերի գեղարվեստական բարձր ճաշակի մասին՝ ներկայացնելով մարդկանց աշխարհընկալման մանրամասները: Դրանք, հիրավի, գեղեցկության և վարպետության կատարյալ ներդաշնակության նմուշներ են:



Նկ.1՝ Գանձատան հավաքածու, համար 199 գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 2՝ Կարսի թանգարանում մեր ուսումնասիրած յուրօրինակ գոտին (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ.3՝ Գանձատան հավաքածու, համար 257 զոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 4՝ ՀՊԹ ԱԼՖ N°1391



Նկ.6՝ Գանձատան հավաքածու, 259 համարի զոտի
(լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 5՝ Գանձատան հավաքածու, 261 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 7՝ Գանձատան հավաքածու, 259 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 8՝ Գանձատան հավաքածու, 352 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 9՝ Գանձատան հավաքածու, 258 համարի զոտի (լուսանկարը արված հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 10՝ Գանձատան հավաքածու, 258 համարի զոտի (լուսանկարը արված հողվածի հեղինակի կողմից)


Նկ. 11՝ Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածու, Մր. 130 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 12՝ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի հավաքածու, 3529 համարի գոտի (լուսանկարը



Նկ. 13՝ Գանձատան հավաքածու, 260 համարի գոտի (լուսանկարը արված հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 14՝ Գանձատան հավաքածու, 260 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 15՝ Լուսիկ Ագուլեցու հավաքածու (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 16՝ Վենետիկի Միսիթարյան միաբանության հավաքածու (լուսանկարը տրամադրվել է միաբանության պատասխանատուի կողմից)



Նկ. 17՝ Գանձատան հավաքածու, 262 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ.18՝ Գանձատան հավաքածու, 263 համարի գոտի (լուսանկարը արված հողվածի հեղինակի կողմից)




Նկ.19՝ հունական արվեստում հայտնվող ռճավորված ծառի պատկերը (Буткевич Л.М. История орнамента, Москва, 2008, Илл. 72)



Նկ. 20՝ Հովհաննես Շարաֆեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի հավաքածու (լուսանկարը արված հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 21՝ Գանձատան հավաքածու, 263 համարի գոտի (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 22՝ Եվրոպացի մարքիզի թագը (Mollett, John W., *An illustrated dictionary of words used in art and archaeology*, 1966, p.96, 205, fig. 208, 442)



Նկ. 23՝ Սանկտ-Պետերբուրգի Պետական Էրմիտաժի, կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի թանգարանի հավաքածու, V3-996 համարի գոտի (<http://collections.hermitage.ru/entity/OBJECT/71455?page=6&query=%D0%BF%D0%BE%D1%8F%D1%81%D0%B0&index=298&fbclid=IwAR3msNFgH6KjyxQux2rHIUP0FgP79jep2YMjG33WxyOnFQ3skrijqSxUrg>)



Նկ. 24՝ Լուսիկ Ագուլեցու հավաքածու (լուսանկարը արված է հողվածի հեղինակի կողմից)



Նկ. 25՝ 1800-ական թթ. ստեղծված վրացական քանդակներից
(<https://www.reindeerantiques.co.uk/Item/1086-Tea-Caddies--Other-Objects-Georgian-carved-statue-of-St-George-and-the-Dragon>)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Ն. Հայկական գոտիները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին// «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, 1 (61), Երևան:
2. Զարդերի հավաքածու, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2008:
3. Թօքաթ Յովսեփ (2005), Հայ արծաթագործ վարպետներ, Լոս Անջելես:
4. Ղազարյան Մ., Էջմիածնի հարստությունները //«Էջմիածին» Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի. Էջմիածին, Ս. Էջմիածին, 1987, հտ. Ե-Զ, էջ 92-101:
5. «Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն» (2010), Երևան: «Տիգրան Մեծ»:
6. Մարգարյան Հ. (1988), Հայկական արծաթե գոտին. Հայաստանի ազգագրություն պետական թանգարանի հավաքածուում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայկական արծաթե գոտիների հավաքածուն, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», թ 7-8:
7. Զուգասզյան Լ. (2010), Ոսկերչությունը Հայաստանում, «Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն», Երևան, «Տիգրան Մեծ»:
8. Պատրիկ Ա. (1967), Հայկական տարազ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան:
9. Պողոսյան Ա., Բալայան Մ. (2020), Արցախի պատմաերկրագիտական թանգարանի արծաթյա զարդերի հավաքածուն:
10. Պողոսյան Ս. (2010), Արծաթե գոտիներ, ԱՊԹ-ի արծաթե գոտիների հավաքածուն, «Լուսիկ Ագուլեցու Անցյալի մասունքներ հավաքածուն», Երևան, «Տիգրան Մեծ»:
11. Տեր-Ղևոնդյան Հ., Արծնագործությունը եւ սեւկիտուածագործությունը Հայաստանի մեջ // «Բազմավեպ», 1986, թ. 1-4:

12. Տեր-Ղևոնդյան Հ., Հայկական արծաթագործական աշխարհիկ զարդերը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1965, հ. 11, Երևան:
13. Аствацатурян Э. (1982), Указатель клейм и имён Кавказских мастеров оружейного и серебряного дела. Москва.
14. Аствацатурян Э. (1978), Мастера серебряного дела Закавказья в XIX-начале XX в, ч. I. Москва.

REFERENCES

1. Avagyan N. Haykakan gotinjerë 19-rd darum ew 20-rd dari skzbin// «Banbjer JErewani hamalsarani», 1987, 1 (61), Erewan:
2. Zardjeri havak'atsu, Erewan k'aghak'i patmut'yan t'angaran, Erewan, 2008:
3. T'ōk'at' Hovsjep' (2005), Hay ardzat'akordz varpjetnjer, Los Anjjeljes:
4. Ghazaryan M., Ejmiadzni harstut'yunnjerë //«Ejmiatsin» Pashtōnakan amsagir Hayrapjetakan At'oroy S. JEjmiatsni. JEjmiatsin, S. JEjmiatsin, 1987, ht. JE-Z, ej 92-101:
5. «Lusik Aguljets'u Ants'yali masunk'njer havak'atsun» (2010), Erewan: «Tigran Mjets»:
6. Margaryan H. (1988), Haykakan artsat'je gotin . Hayastani azgagrut'yun pjetakan t'angarani havak'atsuum 19-rd dari vjerji ew 20-rd dari skzbi haykakan artsat'je gotinjeri havak'atsun, «Kultur-lusavorakan ashkhatank», t' 7-8:
7. CH'ugaszyan L. (2010), Oskjerch'ut'yunë Hayastanum, «Lusik Aguljets'u Ants'yali masunk'njer havak'atsun», JErewan, «Tigran Mjets»:
8. Patrik A. (1967), Haykakan taraz. Hnaguyn zh'amanaknjerits' minch'ew mjer örjerë, Erewan:
9. Poghosyan A., Balayan M. (2020), Arts'akhi patmajerkragitakan t'angarani artsat'ya zardjeri havak'atsun:
10. Poghosyan S. (2010), Artsat'je gotinjer, APT'-i artsat'je gotinjeri havak'atsun, «Lusik Aguljets'u Ants'yali masunk'njer havak'atsun», Erewan, «Tigran Mjets»:
11. Tjer-Ghewondyan H., Artsnagortsut'iwnë yw sywkituatsagortsut'iwnë Hayastani mēj // «Pazmavjep», 1986, t'. 1-4:
12. Tjer-Ghewondyan H., Haykakan artsat'agortsakan ashkharhik zardjerë // «Lrabjer hasarakakan gitut'yunnjeri», 1965, հ. 11, Erewan:
13. Actvacatupjan E. (1982), Ukazatjel' kljejm i imjon Kavkazckix mactjepov opuzhjejnogo i cjepjebplanogo djela. Mockva.
14. Actvacatupjan E. (1978), Mactjepa cjepjebplanogo djela Zakavkaz'ja v XIX-nachalje XX v, ch. I. Mockva.

Ներկայացվել է՝ 24.03.2022

Գրախոսվել է՝ 14.06.2022

Ընդունվել է՝ 25.08.2022

Received 24.03.2022

Reviewed 14.06.2022

Accepted 25.08.2022

Получено: 24.03.2022

Рассмотрено: 14.06.2022

Принято: 25.08.2022

E-mail: s.chookaszian@gmail.com